Հաշվետվություն
Նեվեր գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը**

Լիլիթ Սարոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

Տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջազգային և անդրսահմանային համագործակցության բաժնի պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**

Ֆրանսիա, Նեվեր, 2018թ. նոյեմբերի 9-10

4. **Հրավիրող կողմը**

Նեվերի քաղաքապետ

5. **Գործուղման նպատակը**

Մասնակցել Նեվերում տեղի ունեցած «Միջին քաղաքների նորարարական զարգացման համաշխարհային գագաթնաժողովին» (SIIVIM)»

6. **Քննարկված թեմաները**

Գագաթնաժողովի ընթացքում ներկայացվեցին մի շարք թեմատիկ ուղղություններ, որոնք միտված էին նորարարական տեխնոլոգիաների միջոցով տարածքային զարգացման խթանմանը, միջազգային համագործակցության նոր եզրեր գտնելուն և փորձի փոխանակմանը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գագաթնաժողովի ընթացքում հանդիպել եմ Նեվերի քաղաքապետ Դենիս Թուրիոտին, ում հետ քննարկել ենք ապակենտրոնացված համագործակցության, միջին քաղաքների զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների կիրառման մի շարք հարցեր, կիսվել ունեցած փորձով: Հատկապես կարևորվեց այն հանգամանքը, որ նորարարական տեխնոլոգիաների շնորհիվ ժամանակակից զարգացած քաղաքները համարվում են առաջատար պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, քաղաքային և գյուղական սեփականության կառավարման ոլորտներում, ինչպես նաև բժշկական ծառայությունների, գործարարության, արդյունաբերության, տեղաշարժի հեշտացման և պետական կառավարման օնլայն տարբերակի անցման ասպարեզում:

Ցուցադրության ընթացքում հանդիպեցի նաև տարբեր երկրներից ժամանած մասնագետների, որոնք ներկայացնում էին startup ծրագրեր քաղաքների զարգացման նոր մեթոդների, նոր գործիքակազմի օգտագործման ուղղություններով: Ուշագրավ էր տեղական ինքնակառավարմանը, քաղաքների, գյուղերի ու գյուղատնտեսության զարգացմանը նվիրված ցուցադրությունը, որտեղ մանրամասնվում էր, թե ինչպես կարելի է նոր տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ արդյունավետ կառավարել բնակելի տարածքները, այդ թվում՝ հրդեհի ազդարարման նոր մեխանիզմների, էլեկտրաէներգիայի ծախսի մոնիթորինգի դետեկտորների ներդրմամբ:

Մյուս ցուցադրությունները նվիրված էին հանրային ծառայությունների բարելավմանը, էկոհամակարգերի ներդրմանը, աղբահանությանը, բժշկական ծառայություններին, ջրամատակարարմանը, էլեկտրաէներգիայի խնայմանը: Նմանօրինակ նորագույն լուծումները նպատակ ունեն հեշտացնել պետական կառավարումը, ամրապնդել կառավարություն-քաղաքացի կապը՝ ամուր հիմք դառնալով էլեկտրոնային ժողովրդավարություն համար:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Գագաթնաժողովի ավարտին Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանի և Նեվերի քաղաքապետ, Նեվեր ագլոմերացիայի նախագահ Դենիս Թուրիոտի միջև ստորագրվեց Մտադրությունների վերաբերյալ հուշագիր:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները

Ֆրանսիական կողմին առաջարկվել է շարունակել համագործակցությունը նորարարական տեխնոլոգիաների կիրառման, smart city-ների հիմնադրման, startup ծրագրերի և ապակենտրոնացված կապերի խորացման ողղություններով:

10. Ստորագրությունը, ամսաթիվ

16.11.2018թ.